ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
« 19 » հունվարի 2018 թ. **N 02/10.1/713-18**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Գյուղատնտեսության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-223-15.12.2017-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 21 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-223-15.12.2017-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ

«Գյուղատնտեսության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Հայաստանի Հանրապետության կառավարությունն արդեն իսկ իրականացնում է գյուղատնտեսության ռիսկերի նվազեցման և աջակցման ծրագրեր շուկայական մեխանիզմների կիրառմամբ (հակակարկտային ցանցերի ներդրման նպատակով տրամադրված վարկերի սուբսիդավորման, գյուղատնտեսության ապահովագրության ներդրման (պիլոտային), գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման, գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության պետական աջակցության և այլ նպատակային ծրագրեր): Մինչդեռ նախագծով գյուղատնտեսության պետական աջակցության հիմնական շեշտը դրվում է ոչ շուկայական մեխանիզմների վրա և ենթադրում է պետության կողմից որևէ կերպ չսահմանափակված պայմանական պարտավորության ստանձնում, որը բավականին խնդրահարույց է պետական բյուջեի ծախսային մասի պլանավորման տեսանկյունից:

Միաժամանակ, հարկ է հաշվի առնել այն, որ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (պայմանագիր) 95-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ միության շրջանակներում գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցությունն իրականացվում է պայմանագրի 29-րդ հավելվածով սահմանված մոտեցումներին համապատասխան:

Ելնելով վերոշարադրյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով արդեն իսկ ամրագրված են Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության առաջնահերթությունները, գերակա ուղղությունները,

2) նախագծով նախատեսվող գործընթացները հնարավոր է իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվող առանձին որոշումներով (ելնելով դրանց առաջնահերթությունից),

3) նախագիծը ենթադրում է պետության կողմից ոչ կառավարելի ռիսկերի ստանձնում, դրա ընդունումն առաջարկվող խմբագրությամբ համարում ենք ոչ նպատակահարմար:

Այդուհանդերձ, նախագծի տեքստի վերաբերյալ հարկ ենք համարում նշել որոշ դիտողություններ.

1. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում որպես օրենքի կարգավորման առարկա նշված է գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության իրականացման համակարգի ձևավորումը, սակայն այդ հարաբերությունները կանոնակարգող դրույթներ նախագծում սահմանված չեն:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «այլ» բառն անհրաժեշտ է շարադրել «իրավական» բառից հետո:

3. Նախագծի 3-րդ հոդվածով սահմանված հասկացությունները նախագծի հետագա հոդվածներում չեն օգտագործվում և դրանց սահմանումը գրեթե դառնում է ինքնանպատակ: Միևնույն ժամանակ առաջարկում ենք նախագծում նախատեսել «պետական աջակցության» սահմանումը:

4. Նախագծի 5-րդ հոդվածով սահմանված պետական քաղաքականության նպատակներն ըստ էության սահմանված են գյուղատնտեսության ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, մասնավորապես, ագրարային ոլորտի համար ուղենիշային համարվող փաստաթղթերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությամբ:

5. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գյուղատնտեսության պետական աջակցության սկզբունքներից առաջարկում ենք հանել 2-րդ կետը, քանի որ ոլորտային առաջնահերթությունների և պետական աջակցության չափերի սահմանումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության տվյալ տարվա առաջնահերթությունների հիման վրա՝ բյուջետային գործընթացի շրջանակներում:

Նույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ ֆինանսական միջոցներով պետք է ապահովվի պետական աջակցության շարունակականությունը և ներկայացնել հստակ մեխանիզմներ և կապեր բյուջեի և նախատեսվող աջակցության միջև:

6. Նախագծի 7-րդ հոդվածում նշված ուղղություններով գյուղատնտեսության պետական աջակցությունը համապատասխան իրավական ակտերի հիման վրա հիմնականում արդեն իսկ իրականացվում է, մի մասն էլ կմեկնարկի 2018 թվականին և գտնում ենք, որ նշված հոդվածում պետք է ամրագրվեն գյուղատնտեսության պետական աջակցության գլոբալ ուղղությունները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսության զարգացման գործընթացում պետական աջակցության կարիքները ժամանակի պահանջներից և իրավիճակից ելնելով անփոփոխ չեն:

Նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի առնչությամբ անհրաժեշտ է հստակեցնել պետական աջակցություն ստացող տնտեսությունների ընտրության կարգը, կորստի հաշվարկման մեխանիզմը:

Նույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում, որպես պետական աջակցության հիմնական ուղղություն, նշվում են կառավարության որոշմամբ գյուղատնտեսական տնտեսություններին պետական աջակցության այլ ձևերը: Այդ առումով հայտնում ենք, որ վերոնշյալ կետը խմբագրման կարիք ունի, քանի որ հոդվածի վերնագրում խոսքը գնում է գյուղատնտեսական պետական աջակցության հիմնական ուղղությունների մասին, այլ ոչ թե պետական աջակցության ձևերի մասին:

7. Նախագծի 8-րդ հոդվածում նշվում է, որ գյուղատնտեսության պետական աջակցությունն իրականացվում է տարեկան ծրագրով: Ուստի օրենքի նախագծում անհրաժեշտ է նախատեսել ծրագրին վերաբերող պահանջներ, մասնավորապես, միջոցառումների իրականացման ֆինանսավորման աղբյուրները, ժամկետները, պատասխանատու մարմինները և այլն: Նախագծում ամրագրված չէ գյուղատնտեսության պետական աջակցության կոնկրետ չափանիշ և մեխանիզմներ, որոնք ելակետ կհանդիսանան պետական աջակցության ծրագրեր իրականացնելու համար:

8. Նախագծում բացակայում են պետական աջակցության տրամադրման և դրանց նկատմամբ հսկողության չափանիշներն ու մեխանիզմները:

Միաժամանակ հայտնում ենք, որ գյուղատնտեսության ոլորտում գործող իրավական ակտերով չկարգավորված մի շարք հարաբերությունների կարգավորման նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում ձևավորված աշխատանքային խումբը «Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակման աշխատանքների շրջանակներում 2017 թվականի ընթացքում պարբերաբար կազմակերպել է աշխատանքային նիստեր, որոնց մասնակցել և աջակցություն են ցուցաբերել նաև գյուղատնտեսական դաշինքի ներկայացուցիչները: Ներկայումս Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում շրջանառվում է «Գյուղատնտեսության գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի աշխատանքային տարբերակը, որում ներառված են նաև դրույթներ գյուղատնտեսության պետական աջակցության վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը, միաժամանակ կարևորելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման համար ոլորտում առկա չկարգավորված հարաբերությունների (այդ թվում՝ գյուղատնտեսության պետական աջակցության) բացահայտումը և կարգավորումը, ինչպես նաև օրենքի շրջանակներում այլ իրավական ակտերով սահմանված նպատակների և խնդիրների կատարման ամբողջական ապահովումը, Հայաս-

տանի Հանրապետության կառավարությունը նախագծի հեղինակներին առաջարկում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ «Գյուղատնտեսության գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի շրջանակներում իրենց առաջկությունները համադրել նշված օրենքի նախագծի մոտեցումներին և հանդես գալ համատեղ մեկ միասնական նախագծով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2018 թվականի N 21 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Գյուղատնտեսության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-223-15.12.2017-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. հունվարի 18
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-223-15.12.2017-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի նպատակը եւ կարգավորման առարկան

1. Սույն օրենքի նպատակն է սահմանել գյուղատնտեսության պետական աջակցության հիմնական սկզբունքները եւ ուղղությունները:

2. Օրենքի կարգավորման առարկան գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության իրականացման համակարգի ձեւավորման եւ գործունեության հետ կապված հարաբերություններն են:

Հոդված 2. Գյուղատնտեսության պետական աջակցության մասին օրենսդրությունը

1. Գյուղատնտեսության պետական աջակցության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից եւ այլ իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը.

1) գյուղատնտեսական արտադրություն՝ գործունեության տեսակ, որը նպատակաուղղված է բուսական, կենդանական ծագման հումքի եւ մթերքի արտադրությանը, մշակմանը, սեփական հումքի վերամշակմանը, իրացմանը.

2) գյուղատնտեսություն՝ տնտեսության իրական հատվածի ոլորտ, որը հիմնված է գյուղատնտեսական արտադրության վրա.

3) գյուղատնտեսական ապրանքարտադրողներ՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, որոնք զբաղվում են գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ, ինչպես նաեւ սեփական արտադրության գյուղատնտեսական հումքի եւ մթերքի մշակմամբ եւ(կամ) վերամշակմամբ.

4) գյուղացիական տնտեսություն՝ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող, համատեղ տնտեսություն վարող քաղաքացիների (ընտանիքի անդամների) ինքնուրույն կազմակերպական միավոր: Գյուղացիական տնտեսությունը կարող է ստեղծվել նաեւ մեկ քաղաքացու կողմից.

5) գյուղատնտեսական հումքի եւ մթերքի մշակում՝ տեխնոլոգիական գործընթաց, որի արդյունքում էական չի փոփոխվում գյուղատնտեսական հումքի եւ մթերքի ֆիզիկական եւ քիմիական կազմը.

6) գյուղատնտեսական հումքի եւ մթերքի վերամշակում՝ տեխնոլոգիական գործընթաց, որի արդյունքում զգալիորեն փոփոխվում է գյուղատնտեսական հումքի եւ մթերքի ֆիզիկական եւ(կամ) քիմիական կազմը.

7) ագրոպարենային համակարգ՝ գյուղատնտեսության, գյուղատնտեսական հումքի եւ մթերքի վերամշակող արդյունաբերության ճյուղերի, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ու մատակարարումների ոլորտի ամբողջություն.

Հոդված 4. Գյուղատնտեսության պետական աջակցության սուբյեկտները

1. Սույն օրենքի շրջանակներում պետական աջակցություն են ստանում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք:

Հոդված 5. Գյուղատնտեսության պետական աջակցության նպատակները

1. Գյուղատնտեսության պետական աջակցության հիմնական նպատակներն են՝

1) պետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը.

2) գյուղատնտեսական հումքի եւ մթերքի մշակման ոլորտում մասնագիտացման մակարդակի բարձրացումը.

3) հողային, ջրային, աշխատանքային, գիտատեխնիկական, էներգետիկ, կենսական եւ այլ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը.

4) գյուղատնտեսության ներճյուղային կառուցվածքի բարելավումը, բարձր ավելացված արժեք ապահովող գյուղատնտեսական հումքի եւ մթերքի արտադրության տեսակարար կշռի ավելացումը.

5) շուկայական կողմնորոշում ունեցող մրցունակ ագրարային հատվածի ձեւավորումը.

6) պետության ագրոպարենային համակարգի կայուն եւ համաչափ զարգացման ապահովումը.

7) սահմանմամերձ, լեռնային, բարձրլեռնային եւ գյուղատնտեսական արտադրության համար անբարենպաստ տարածքների զարգացման ապահովումը.

8) գյուղատնտեսության կարիքների համար օգտագործվող բնական ռեսուրսների պահպանումը եւ հավասարակշռված օգտագործումը:

Հոդված 6. Գյուղատնտեսության պետական աջակցության սկզբունքները

1. Գյուղատնտեսության պետական աջակցության սկզբունքներն են՝

1) գյուղատնտեսության պետական աջակցության շարունակականության ապահովումը.

2) գյուղատնեսության պետական աջակցության ծավալների աճի ավելացումը պետական բյուջեի աճին զուգընթաց.

3) գյուղատնտեսական տնտեսությունների համար պետական աջակցության հասցեականության եւ հասանելիության ապահովումը.

4) գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ սննդամթերքի շուկայի միասնականությունը եւ մրցակցության հավասար պայմանների ապահովումը.

Հոդված 7. Գյուղատնտեսության պետական աջակցության հիմնական ուղղությունները

1. Գյուղատնտեսության պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝

1) հացահատիկային եւ կերային մշակաբույսերի առաջնային սերմնաբուծության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

2) գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը.

3) սահմանամերձ համայնքների գյուղացիական տնտեսություններին ֆինանսական աջակցության տրամադրումը.

4) գյուղացիական տնտեսություններին ֆինանսական աջակցությունը բնական աղետների կամ համաճարակների հետեւանքով բերքի կորստի կամ գյուղատնտեսական կենդանիների անկման դեպքում կորստի առնվազն 50 տոկոսի չափով.

5) գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության պետական աջակցությունը.

6) ժամանակակից տեխնոլոգիաներով այգիների մշակման եւ ոռոգման արդյունավետ համակարգերի ներդրման պետական աջակցությունը.

7) պետական աջակցությամբ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրումը.

8) բնական աղետների կանխարգելմանը կամ մեղմմանն ուղղված միջոցառումների պետական աջակցությունը.

9) հողերի բերրիության բարձրացման միջոցառումների եւ գյուղատնտեսական հողերի պաշտպանության միջոցառումների իրականացումը.

10) գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված ժամանակակից տեխնոլոգիաների, գիտության եւ տեխնիկայի նորագույն ձեռքբերումների, արտասահմանյան եւ տեղական փորձի ուսումնասիրման արդյունքների տեղայնացումը եւ ներդրումը.

11) կառավարության որոշմամբ գյուղատնտեսական տնտեսություններին պետական աջակցության այլ ձեւերը:

Հոդված 8. Գյուղատնտեսության պետական աջակցության իրականացումը

1. Գյուղատնտեսության պետական աջակցությունն իրականացվում է տարեկան ծրագրով: Տարեկան ծրագիրը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը եւ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքի սկզբունքներին, աջակցման նպատակներին եւ պետական աջակցության հիմնական ուղղություններին համապատասխան:

Հոդված 9. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է մեր հանրապետության համար կարեւորագույն նշանակություն ունեցող գյուղատնտեսության ոլորտին եւ գյուղացիական տնտեսություններին պետության կողմից օրենքով սահմանված կարգով համապատասխան աջակցության ցուցաբերման անհրաժեշտությամբ: